## ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

### Ի ԿՈՂՄԱՆԷ ՍԻՆՕԴԻ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ·

---

Ալաշկերտու և Բագրևանդայ գաղթականաց անուամբ ժողովուած նուիրագրամոց վերաբերմամբ լրագրաց մէջ կարդալով քանի մի թղթակիցների անստոյգ և անհիմն տեղեկութիւնք, իբր թէ այդ դրամը յանձնուած է մի այլ նպատակի համար գործադրելու, թէ և այսպիսի անստոյգ տեղեկութիւններին աւելորդ էր պատասխանելն անգամ, բայց որովհետև գործն դրամական է և այդպիսի անստոյգ և անհեթեթ տեղեկութիւնք կարօղ էին վշտացնել նոյն գաղթականաց և նուիրատուաց սրտերը և պարզամիտներին գայթակղեցնել· ուստի պարտք համարի ծանուցանելու, որ այդ գումարը գտնուում է դեռ ևս Էջմիածնայ Գանձարանում: Վեհափառ Հայրապետի սկզբանց հակառակ է եղել միշտ և է որևիցէ գումար յայտնի մի նպատակով ժողովուած մի ուրիշ նպատակի, ընկերութեան կամ դպրոցի նուիրել, ուստի նոյն գումարը որոշեալ է գործ դնել իւր ժամանակին միջոցաւ Սինօդի ի պէտս դաստիարակութեան Ալաշկերտու և Բագրևանդայ գաւառաց, որոնք աւելի մեծ կարօտութիւն ունին: